

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 155

Ներքին կոչում – Կայ նաեւ կոչման մի ուրիշ տեսակը, կոչման երկրորդ առումը՝ որը աստուածաբանութեան մէջ ճանաչած է որպէս ներքին կոչումը: Այս մօտիկից կապւած է արտաքին կոչման հետ, քանի որ այդ հենց նոյն փրկութեան պատգամն է որ մեղաւորները լսում են արտաքին կոչման մէջ, սակայն այդ Սուրբ Հոգով ազդեցիկ է դառնում ընտրեալների սրտերի մէջ: Ուստի, այս կոչումը նաեւ ակնարկւում է որպէս ազդեցիկ կոչը (Եսայիա 55:10-11, Եբրայեցիս 4:12):

Յովհաննէս 10ում Յիսուսը ներկայացնում է Հովիւի ու Նրա ոչխարների մի գեղեցիկ պատկեր՝ ուր Աստուծոյ ոչխարները բարի Հովիւ Աստուծոյ ճանաչած են իրանց «անունովը», եւ Նա կանչում է նրանց, եւ նրանք Նրա ձայնը գիտեն ու հետեւում են Նրան, եւ Նա դուրս է հանում նրանց (համարներ 3-4, 27-28): Այս է ընտրեալ (էլէքթա) լինելու իմաստը՝ նրանք որոնք կոչւած են աշխարհից դուրս: Ծննդոց 1ում, «Աստուած ասեց (այսինչը) լինի ...» նախադասութիւնը կրկնում է ինը անգամներ, եւ ամեն անգամ կատարում է Աստուծոյ ցանկացած նպատակը: Տիեզերքը գոյացաւ Աստուծոյ խօսքի միջոցով՝ աստուածային հրովարտակով կամ հրամանով: Աստուած աշխարհքին գոյանալու չհրաւիրեց կամ չհամոզեց, իսկ Նա դրան տեղի ունենալու հրամայեց կամ կանչեց, եւ այդ կատարուեցաւ հենց այդպէս որ ծրագրւած էր (Մատթոս 33:6, 9): Մենք տեսնում ենք նոյն գորութիւնը երբ Քրիստոսը Ղազարոսին մեռելներից յարութիւն տաւ (Յովհաննէս 11:43-44): Չկար որեւէ համոզում, ոչ էլ որեւէ երկմտութիւն: Աստուած խօսեց եւ մեռածը կենդանացաւ: Աստուծոյ կոչումը ազդեցիկ էր:

Ինչպէս տիեզերքը ոչինչից ստեղծուեց, եւ ինչպէս Ղազարոսը մահից կենդանացուեց, նոյնն էլ ուղիղ է մեղաւորների փրկութեան վերաբերեալ (Հռովմայեցիս 1:16, 4:17): Աւետարանի արտաքին կոչումը գայթակղութիւն եւ յիմարութիւն է նրանց համար որոնք կոչւած չեն. բայց նրանց համար որոնք կոչւած են, Սուրբ Հոգու ներգործութեամբ ազդեցիկ է դառնում արտաքին կոչումը, եւ ուստի նրանք անվրիպելիօրէն կ'պատասխանեն հաւատքով: Այսպիսիների համար խաչեալ Քրիստոսը Աստուծոյ ամենամեծ, ամենաաքանչելի գորութիւնն ու իմաստութիւնն է (Ա. Կորնթացիս 1:23-24):

Իհարկէ, Աւետարանական եկեղեցու մէջ եղած մեծագոյն տեսանկիւնը հակառակ է վեր նշւած տեսանկիւնին, քանի որ նրանք չեն զանազանում արտաքին եւ ներքին կոչման միջեւ, իսկ փոխարէն հաստատում են որ Աստուած հայթայթում է բաւարար շնորհք բոլոր մեղաւորներին, որը ամենի համար կարելի է դարձնում Աստուծոյ կոչմանը պատասխանել հաւատքով: Ոմանք ընդունում են Աստուծոյ հրաւերը, մինչ ուրիշները մերժում են այդ: Բայց այսպէս մի տեսանկիւն հերքում է մարդկութեան ընկած վիճակի լրիւ իրականութիւնը ու հետեւանքը: Աստուածաշունչը ուսուցանում է որ անկման հետեւանքով մարդ արարածներ ծնւում են հոգեւորապէս եւ բարոյականապէս այլանդակւած (մարդու լիովին պղծութիւնը): Անկումը արատաւորել է մարդու ամբողջութիւնը՝ մարմնով, հոգով, մտքով, սրտով, զգացումներով ու կամքով: Ընկած մարդը չ'ունի իր մէջ որեւէ հոգեւորապէս կամ բարոյականապէս բարիք (Ծննդոց 6:5, 8:21, Թւոց 15:38-39, Երեմիա 17:9), բայց մեղքի ստրուկ է ու Աստուծոյ թշնամի (Յովհաննէս 5:42, 8:32-34, Հռովմայեցիս 5:10, 6:20, Եփեսացիս 2:1-3): Ընկած մարդը անկարող է անելու որեւէ հոգեւորապէս բարի բան (Մատթոս 7:17-18, Հռովմայեցիս 3:10-18, 8:7, Յովհաննէս 6:44, Ա. Կորնթացիս 2:14, Եբրայեցիս 11:6): Ընկած մարդը նաեւ ակամայ է անելու որեւէ հոգեւորապէս բարի բան (Առակաց 21:10, Հռովմայեցիս 8:5-7, Եփեսացիս 2:1-3, Տիմոս 3:3):

Որպէսզի մարդը Աստուծոյ կոչին պատասխանի նախ մի հիմնական փոփոխութիւն պիտի տեղի ունենայ նրա բնոյթում՝ նրա կենտրոնում, նրա սրտի մէջ: Յովհաննէս 3:3ում Յիսուսը Նիկողեմնոսին ասեց մի բան պիտի կատարի նախքան մէկը կարողանայ տեսնի Աստուծոյ արքայութիւնը, եւ մինչեւ որ այդ տեղի ունենայ նա չի կարող ունենայ յաւիտենական կեանք: Այդ «մինչեւ որը» մի ընդհանրական հարկաւոր պայման է, եւ այս պայմանը հաւատք կամ ապաշխարութիւն չի այլ վերստին ծնելն է:

Վերածնութիւն – Ներքին կոչման միջոցով Սուրբ Հոգին թափանցում է մեղաւոր մարդու կենտրոնը, եւ կատարում է նրա բնութեան փոփոխութեան մի գերբնական գործ, յարուցանելով նրան հոգեւոր մահից դէպի կեանք: Սուրբ Հոգու այս ներգործութիւնը ճանաչւած է որպէս վերածնութեան գործ, ուր մի հոգեւորապէս մեռած անհատ հոգեւորապէս վերստին է ծնւում. ուր քարեղէն սիրտը մարմնեղէն սրտի է փոխուում. ուր միտքը լուսաւորում է, եւ կամքը վերանորոգում: Սուրբ Հոգու ներքին կամ ազդեցիկ կոչումը ուստի համանշակաւ է (նոյնն է) Սուրբ Հոգու վերածնութեան գործի հետ՝ որն կատարում է Աստուծոյ խօսքի հոչակման միջոցով (Յովհաննէս 6:63, Գործք Առաքելոց 13:48, Ա. Թեսաղոնիկեցիս 1:4-5, Բ. Թեսաղոնիկեցիս 2:13-14, Յակոբոս 1:18, Ա. Պետրոս 1:23): Նրանց որ Սուրբ Հոգին վերածնում է դառնում են նոր ստեղծուածներ, եւ իրենց փոխւած բնութեամբ նրանք հիմա հակամէտ են դէպի Աստուած եւ Աստուծուն ցանկացող, եւ կարող են դարձել պատասխանելու Նրա կոչումը, եւ ուստի պատասխանում են հաւատքով (Երկրորդ Օրինաց 30:6, Եզեկիէլ 36:25-27, Բ. Կորնթացիս 4:6, 5:17, Եփեսացիս 2:1, 4-5)